եւս կարացին մնալ յԵրուսաղէմ, եւ դէմ եդեալ իջին 'ի Յոպպէ · յայնժամ պաշարեալ զնոսա Ապու Մէրաղ՝ պահանջէր յիւրաքանչիւր վանաց 200 քսակս, և նոքա յանձն առին փոլիցայիւ վճարել 'ի Բիւզանդիոն · 'ի նոյն պահու եհաս առ նա գիր 'ի գործակատարէ իւրմէ (Գարու քահեասի), թէ քրիստոնեայք ոչ զփոլիցայն ընկալան և ոչ զդրամն եառուն՝ և դուն գործեն այսր անդր կորուսանել զքեզ, ուստի քեզ մնայ կողոպտել զդոսա և առաքել դրամս առ 'ի հոգալ զգործս քո։ Իսկ նա 'ի վերայ այսր թղթոյ բորբոքեալ իբրեւ զհուր՝ թափեաց զյաստուն բարկութեան իւրոյ 'ի վերայ ուխտաւորաց և տեսչաց վանորէից՝ պահանջելով 'ի նոցանէ զդումարն վճարել անդ 'ի Յոպպէ։ Եւ նոքա խոստացան վճարել յԵրուսաղէմ, եւ ուխտաւորք արձակեալ զնացին յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։ Յաւուրս յայսոսիկ այլազգիք Երուսաղէմի յահէ բռնաւորին դումարեցին զօրս՝ որպէս յաւուրս մեծին Նաբոլիոնի, և բնակեցուցին զնոսա վրանաւ 'ի պարտէզն Հայոց հանդէպ վանաց Ս. Յակոբայ, զորոյ պէտս սկսան հոգալ վանականք՝ իբրեւ թէ պահապան են քաղաքին, եւ տղա առեալ յիւրաքանչիւր վանաց 22,000 դահեկանս, բաց յընծայից և այլոց՝ արձակեցին զնոսա։ Ապու Մէրաղ յեցեալ 'ի բռնութիւնս իւր կոչեաց զՏեսուչս վանաց ասէ՝ գրեցէք յԵրուսաղէմ առ Մերուենիսն՝ առաքել առ իս ծրարս ոսկւոյ 'ի թոշակ զօրաց իմոց, զի իմ եդեալէ 'ի մոլ ելանել յԵրուսաղէմ · լուեալ զայս վանականաց՝ խորհեցան խայս տալ անտի, բայց զմտաւ ածէին թէ 'ի գալստեան նորա գուցէ մեղմասցին այլազգիք 'ի բռնութենէ, այլ ինքեանք եւս ունէին ըմբռել զբաժակն դառնութեան։ Տեսուչքն Լատինաց և Յունաց Յոպպէի չկարացեալ տոկալ բռնութեան նորին, փախուցեալ եկին յԵրուսաղէմ, փախեաւ և Աբրահամ վարդապետ Տեսուչն Ռեմլէի։ Լուեալ զայս բռնաւորին՝ բնակեցոյց զօրս 'ի վանս նոցա, և նոքա քանդեալ ապականեցին զամենայն փայտակերտս և զչինուածս։ Իսկ Ղազար վարդապետ չկարացեալ գտանել հընարս փախստեան՝ մատնեցաւ 'ի ձեռս բռնաւորին · զկնիկ գանիկ և խոշտանգանաց՝ վճառեաց զայն 25,000 դահեկանի Տէր կոչեցեալ զօրաց՝ զոր լուեալ Թէոդորոս Պատ-